ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 06.02.2026թ. թիվ 969-Ա հրամանով նշանակված ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018թ. հուլիսի 19-ի «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 814-Ն որոշմամբ /այսուհետ՝ որոշում / և ի կատարումն Ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 06.02.2026թ. թիվ 969-Ա հրամանի, քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակով ինքնաշխատ եղանակով ձևավորված քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովն իրականացրել է ծառայողական քննություն ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության /այսուհետ՝ ծառայություն/Աջափնյակի բաժնի պետ Ռոզա Քոչարյանի և ծառայության միգրացիայի և քաղաքացիության ոլորտի քաղաքականության իրականացման վարչության պետ Իրինա Մկրտչյանի զեկուցագրերում ներկայացված ծառայության Աջափնյակի բաժնի մասնագետ Գոհար Լյովայի Պետրոսյանի կողմից քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու դեպքերով:

Ծառայողական քննությամբ պարզաբանվում են հետևյալ հարցերը՝

1. Արդյո՞ք Գոհար Պետրոսյանի և գործընկեր աշխատակիցների հետ աշխատանքի վայրում պարբերաբար եղել են կոնֆլիկտներ.
2. Արդյո՞ք Գոհար Պետրոսյանի կողմից ծառայության Աջափնյակի բաժին դիմած շահառուների նկատմամբ դրսևորել է քաղաքացիական ծառայողին ոչ պարկեշտ վարքագիծ"
3. Արդյո՞ք Գոհար Պետրոսյանի կողմից սադրիչ պահվածք դրսևորելու արդյունքում ծառայության Աջափնյակի բաժնի աշխատակիցների միջև ստեղծվել է կոնֆլիկտային իրավիճակներ:

Համաձայն որոշման 21-23 կետերով սահմանված դրույթների՝

1. Ծառայության Աջափնյակի բաժնի պետ Ռոզա Քոչարյանը և նույն բաժնի մասնագետ Գոհար Լյովայի Պետրոսյանը տեղեկացվել են նշանակված ծառայողական քննությամբ պարզաբանման ենթակա հարցերի և իրենց վերապահված լիազորությունների վերաբերյալ"
2. Հանձնաժողովը պահանջել և ստացել է գրավոր բացատրություն քննվող հարցերի վերաբերյալ.
3. Ծառայության Աջափնյակի բաժնում տիրող իրավիճակի մասին զրուցել ենք Աջափնյակի բաժնի պետ Ռոզա Քոչարյանի և նույն բաժնի

մասնագետներ Գոհար Պետրոսյանի, Աննա Հարությունյանի, Աստղիկ Բարսեղյանի, Գայանե Արիստակեսյանի, Լիլիթ Հովսեփյանի, Կարմեն Մանուչարյանի, Ռուզաննա Ոսկանյանի հետ, ինչի արդյունքում տեղեկացել ենք , որ բաժնում տիրում է լարված մթնոլորտ:

Հրամանով ձևավորված հանձնաժողովը, ձեռք բերված նյութերն ուսումնասիրելուց հետո՝

1. Կազմեց ծառայողական քննությունն ավարտելու մասին արձանագրություն,
2. Հանձնաժողովին ներկայացված նյութերը հարթակով ներկայացրեց ծառայողական քննության կողմերին՝ նյութերին ծանոթանալու համար:

Ձեռք բերված նյութերի, ինչպես նաև կայացած զրույցի համաձայն՝

1. Ծառայության Աջափնյակի բաժնի մասնագետ Գոհար Պետրոսյանի կողմից աշխատակիցներին կամ շահառուներին անհարգալից վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ որևէ փաստարկ, հիմնավորում չներկայացվեց մասնակից և դրան առնչվող անձանց կողմից:
2. Ծառայությունում հոգեբանորեն լարված, բարոյապես ընկճված իրավիճակի վերաբերյալ որևէ ապացույց չներկայացվեց
3. Շահառուների նկատմամբ անհարգալից դրսևորման առնչությամբ որևէ գրավոր բողոք չներկայացվեց:
4. Զրույցի ընթացքում ծառայության Աջափնյակի բաժնի աշխատակիցները հակված էին չխոսելու, չբարձրաձայնելու բաժնում ստեղծված իրավիճակը և Գոհար Պետրոսյանին բնութագրեցին որպես «դժվար» և գործընկերների հետ չշփվող անձնավորություն, միաժամանակ տեղեկացրեցին, որ Գոհար Պետրոսյանը պարբերաբար միջամտում է իրենց գործառույթներին և դիտողություններ անում վերջիններիս:

Հաշվի առնելով Ռոզա Քոչարյանի և նույն բաժնի մասնագետներ Գոհար Պետրոսյանի, Աննա Հարությունյանի, Աստղիկ Բարսեղյանի, Գայանե Արիստակեսյանի, Լիլիթ Հովսեփյանի, Կարմեն Մանուչարյանի, Ռուզաննա Ոսկանյանի կողմից ներկայացված բացատրություններն ու բանավոր զրույցները հանձնաժողովը գտնում է, որ

1. Ծառայության Աջափնյակի բաժնի մասնագետ Գոհար Պետրոսյանի կողմից հանրային ծառայողների համար սահմանված վարքագծի կանոնները խախտելու դեպքերը չեն հիմնավորվել:
2. Համաձայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 51-րդ և 54-56-րդ կետերի՝
   - Հանրային ծառայողը պարտավոր է հարգել այլ հանրային ծառայողների և հասարակության բոլոր անդա,մների արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները
   - Հանրային ծառայողը պարտավոր է ի պաշտոնե հաղորդակցության բոլոր միջոցներն օգտագործելիս, ցանկացած իրավիճակում ցուցաբերել զսպվածություն, հավասարակշռություն և հարգալիրություն
   - Հանրային ծառայողը պարտավոր է գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում, գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը
   - Հանրային ծառայողը պարտավոր է գործընկերների և պետական այլ մարմինների հետ հաղորդակցվելիս լինել նրբանկատ, զուսպ, հարգալից, բարելիրթ, չխոչընդոտել այլ հանրային ծառայողների աշխատանքային պարտականությունների կատարմանը:

Գայանե Հովհաննիսյան

Կարեն Օսեյան

Նարինե Բարսեղյան

Վարազդատ Պոկացյան

Սուսաննա Գրիգորյան

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի՛ Արա Ֆիդանյան

Սույնով արձանագրում ենք, որ Ձեր 06-02-2026 -ի թիվ 969-Ա հրամանով (որոշմամբ) սկսված ծառայողական քննությունը համարում ենք ավարտված: Ծառայողական քննությունը վարել է(են)՝

Գայանե Հովհաննիսյան

Կարեն Օսեյանը

Նարինե Բարսեղյանը

Վարազդատ Պոկացյանը

Սուսաննա Գրիգորյանը

Միաժամանակ կից ծառայողական քննության կողմերի ծանոթացմանն ենք տրամադրում ծառայողական քննության նյութերը

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՂ՝ Գայանե Գերցենի Հովհաննիսյան